

Holy Resurrection Armenian Apostolic Church

909 Michigan Avenue - (P.O. Box 143)

South Milwaukee, Wisconsin 53172

Office: 762-7460

Յուլիս 16, 1976

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արք. Մանուկեան

Առաջնորդ Հայոց Հայաստանեայց Եկեղեցւոյ

Արեւելեան Թեմին Հիւսիսային Ամերիկայի

եւ Նախագահ Թեմական Խորհուրդի

ն իւ Եորք.

Սիրելի Առաջնորդ Սրբազան Հայր,


Ստացած եմ Ձերդ Սրբազնութեան Յուլիս 9, 1976 թուակիր նամակը: Ժխական Խորհուրդի մեր վերջին ժողովին մէջ կարդացուեցաւ Ձեր նամակը, որով մեզի իմաց կուտայիք որ Օգոստոս 15ին պիտի կարողանաք Ս. Պատարագ մատուցանել:

Օգոստոս 13էն, մինչեւ Օգոստոս 16ի համար հետեւեալ կարգադրութիւնները կատարեցինք: Ըստ հետեւեալին—

Օգոստոս 13, 1976 — Օղակայան հասնելէ ետք մեկնում դէպի ՀԱՅ ԳԷՄՔ, մինչեւ ժամը 5:00 Յ. Միջօրէի: Ժամը 6ին, ընթրիք ժխական Խորհուրդի անդամներուն հետ, միայն Սառլթ Միլվուքի: Ժողով՝ ժամը 8ին: Հայ Գէմքի մէջ խաղողի Օրհնութիւն կէսօրէ ետք:

Օգոստոս 14, 1976 — Ս. Յովհաննէս Հայաստանեայց Եկեղեցւոյ ժխական Խորհուրդի հետ նախաճաշ ժամը 9:30ին, պանդոկի մէջ: Թէնթրթիւ... Յետ միջօրէի ժամը 1:00ին, դպրաց դասի հետ փորձ: Երեկոյն—եան ժամը 5:00ին Ձեռնադրութիւն: Հոգեշնորհ Տ. Վարուժան Գապարաճեան եւ Արժանաշնորհ Տ. Արտէն Զինյ. Աշճեան պիտի մասնակցին սոյն արարողութեան եւ հանդիսութեանց որ պիտի հետեւի 7:00ին զովացուցիչով եւ մասնաւոր ընթրիքով ժամը 7:30ին: Մեր տիրացուներէն Պր. ԺՕ Թուկուրեանի պանդոկի շքեղ հանդիսասրահներէն մէկուն մէջ, այս այն պանդոկն է ուր դուք պիտի Օթեւանիք:

Օգոստոս 15, 1976 — Հանդիսաւոր Ս. Պատարագ, յետ 30 վարկեան առաւօտեան ժամեր—զութենէ Բանին կենացքարոզութիւն 11:30ին, եւ որմէյ ետէ խաղողի Օրհնութիւն: 12:30ին կէս Օրուան ֆէլօշիփ: Ժամը 1:00ին, Դպրաց դասու անդամ եւ անդամուհիներուն հետ ճաշ Տէր եւ Տիկիի Պոռուս Հէնսընի տան մէջ: Նոյն օրը երեկոյեան ժամը 5:00ին, Եկեղեցւոյս մէջ բարեկամակն հանդիպում Եկեղեցւոյս Տիկնայց անդամուհիներուն կողմէ: Ժամը 7:30ին շրջանային ժխական



Holy Resurrection Armenian Apostolic Church

909 Michigan Avenue - (P.O. Box 143)

South Milwaukee, Wisconsin 53172

Office: 762-7460

Խորհուրդներու եւ Թեմական Պատգամաւորներու հետ միացեալ ժողով, Ս. Յարութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդիսասարհին մէջ:

Օգոստոս 16, 1976 — Ազատ օր

Առ այժմ այս է ծխական Խորհուրդի կարգադրութեանց մանրամասնութիւնները:

Եկեղեցւոյս դպրաց դասը՝ Օգոստոս 14ի եւ Օգոստոս 15ի եկեղեցական արարողութիւններու առթիւ երգուելիք շարականները եւ այլն նկատի ունենալով իրենց առաջին փորձը ունեցան:

Ծխական Խորհուրդը եւ ես անգամ մը եւս շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ կ'ակնկալենք ձեր բարի գալուստը մեր մէջ: Մենք վստահ ենք որ ձեր ներկայութիւնը անգամ մը եւս պիտի ոգեւորէ մեզ, որուն համար աղօթող ենք եւ սպասող:

Որդիական սիրով եւ խոնարհաբար մատչիմ ի համբոյր ձերդ Ս. Աջոյն:

Արշակ Արդ. Խաչատուրեան
Արշակ Արդ. Խաչատուրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն
Հայաստանեայց Եկեղեցւոյ

Յ.Գ. Տիար Պերժ Նրէցեանին նամակ մը գրուեցաւ դպրաց դասի շապիկներուն մասին, մանրամասնութեանց մօտէն տեղեակ պիտի պահենք ձերդ Սրբազնութիւնը:

Տէր Արտէնի հետ Հայ Գէմբի մասին խօսակցութիւն մը ունեցանք թէ՛ ինչու՞ այս տարի մեզի դուրս ձգեցին կրօնական եւ Հայ պատմութեան դասաւանդելու քաղցր պարտականութէնէն: Անշուշտ ես անձնապէս հարց — յարուցանել չուզեցի սակայն Տէր Արտէնը ըսաւ թէ նամակ մը գրած է ձեզի եւ թէ ինձի ցոյց տուաւ ետքէն: Իրաւ է թէ Տիրացու Մանուկ Բէլէկեանը՝ անցեալ տարի առաջին անգամ ըլլալով մասնակցեցաւ Հայ Գէմբին՝ եւ ես ալ՝ Տիրացուին հետ դասաւանդեցինք Հայ Գէմբի մէջ: Տիրացուն պատասխանատուութիւն ստացնեց այս տարուան համար 1976 ի, Հայ Գէմբի ծրագիրը մշակել եւ ես կասկած իսկ չ'ունէի թէ Տէր Արտէնը կամ թէ ես դուրս պիտի ձգուէինք: Տիկին Վարդենի Չիրքինեանը ըսաւ թէ այս տարի յարմար նկատեցինք որ Տիրացու Մանուկը եւ Արթըր Բէիշեան պատանին դասաւանդութեան պատասխանատուութիւնը իրենց վրայ առնեն: Ինչպէս որ ըսի ես հարց չի յարուցանեցի, իրաւ է թէ ես ժողովներուն ներկայ գտնուած եմ որպէս վարչական: